ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/159 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	«Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ	«Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ	Հիմք նյութ՝ արույր Միջանկյալ շերտ՝ նիկելապատում, նիկելի հաստություն՝ 6–8 միկրոն Վերին շերտ՝ 999 հարգի ոսկեպատում, ոսկու հաստություն՝ 8–10 միկրոն Թույլատրելի նվազագույն հաստությունից ցածր շերտավորմամբ ապրանքը ենթակա է մերժման: Պարտադիր է կիրառել հակաօքսիդացիոն պաշտպանիչ շերտ կամ թափանցիկ լաքապատում՝ արծաթի օքսիդացման, սևացման և գունաթափման կանխարգելման նպատակով: Պատրաստի մեդալի մակերեսը պետք է լինի կատարելապես միատարր, հարթ, առանց բծերի, քերծվածքների, ծակոտիների, մութ կետերի կամ երանգային (գունային) տարբերությունների: Տրամագիծ՝ 50 մմ ±1% Հաստություն՝ • ռելեֆի ամենացածր հատված՝ 3.2 մմ ±1% • ամենաբարձր հատված՝ 4.4 մմ ±1% Քաշ՝ 70 գ ±0.5 գ Երկկողմանի դիզայն՝ համաձայն նմուշի: Մեդալի բնօրինակը (նմուշը) տրամադրվում է պատվիրատուի կողմից, որի հիման վրա մատակարարը պետք է մշակի և ներկայացնի արտադրական էսքիզը՝ նախապես համաձայնեցման համար: Էսքիզը ենթակա է վերջնական հաստատման պատվիրատուի կողմից մինչև արտադրության մեկնարկը:

				Մեդալի սկավառակի եզրերը հարթ է, որտեղ լազերի օգնությամբ փորագրված է հերթական համարը (հերթական համարների ցանկը պետք է համաձայնեցվի պատվիրատուի հետ): Մատակարարվող հուշամեդալներն անզեն աչքով պետք է չտարբերվեն բնօրինակից: Մեդալի սկավառակի եզրերը հարթ է, որտեղ լազերի օգնությամբ փորագրված է հերթական համարը /հերթական համարների ցանկը ճշտել պատվիրատուի հետ/: Մատակարարվող հուշամեդալներն անզեն աչքով պետք է չտարբերվեն բնօրինակից: Հուշամեդալը պետք է անշարժ դրված լինի թափանցիկ ակրիլային հումքից պատրաստված կապսուլայի մեջ, որն իր հերթին պետք է դրված լինի տուփի մեջ: Տուփի վերին մասը պետք է ունենա սերտիֆիկատը պահող ժապավեն, իսկ ներքևի մասի կենտրոնում պետք է ունենա հուշամեդալը կապսուլայով ամրացնելու հնարավորություն: Տուփի չափսերն են՝ լայնություն 9սմ, երկարություն 9սմ, հաստություն 3սմ: Տուփի թե՛ արտաքին, թե՛ ներքին մակերեսները պետք է պատված լինեն բարձրորակ կապույտ վելվետային գործվածքով, որն ապահովում է ներկայացուցչական (պրեմիում) տեսք և հուշամեդալի լրացուցիչ պաշտպանվածություն: Տուփը պետք է ունենա հատուկ ձևավորված խորշ՝ 50 մմ տրամագծով հուշամեդալը կապսուլայով հանդերձ անշարժ և ամուր ֆիքսելու (ամրացնելու) հնարավորությամբ: Փակում՝ մագնիսային (թաքնված մագնիս), ապահով և հարմարավետ փակման համար: Յուրաքանչյուր պատրաստի տուփ (ներսում գտնվող կապսուլայով և մեդալով հանդերձ) պետք է անհատականորեն փաթեթավորված լինի պոլիեթիլենային տոպրակի մեջ: Մեդալի երաշխիքային ժամկետ՝ 24 ամիս, որի ընթացքում Մատակարարը պարտավորվում է վերացնել թերությունները կամ փոխարինել այն ապրանքը, որի մոտ առկա է արծաթապատ շերտի գունաթափում, օքսիդացում կամ շերտազատում՝ նորմալ պահպանման պայմաններում: Երաշխիքը չի տարածվում մեխանիկական վնասների, քիմիական ազդեցության կամ ոչ պատշաճ պահպանման հետևանքով առաջացած փոփոխությունների վրա:

			Կատարողը պարտավորվում է իր հաշվին և ուժերով վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները (իրականացնել կրկնակի մշակում և պատում)՝ Պատվիրատուի կողմից ծանուցումն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թաքնված դեֆեկտների (օրինակ՝ լաքի տակից արծաթի հետագա սևացում կամ շերտավորում) դեպքում, Կատարողը պարտավորվում է անվճար վերականգնել կամ փոխարինել տվյալ մեդալները նույն ժամկետում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/159 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
2			